ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպություններին լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին», «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպություններին լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին», «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին», «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է ներկայացված արտոնությունների կիրառման արդյունքում անհատ ձեռնարկատերերին և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումից դուրս եկած ֆիզիկական անձանց ազատել եկամտահարկի և սոցիալական վճարի նվազագույն գումարների գծով հաշվարկված պարտավորությունների վճարումից, ինչպես նաև ակնկալվում է անհատ ձեռնարկատերերի, նոտարների և ինքնազբաղված անձանց կողմից վճարված սոցիալական վճարների գումարների՝ որպես կուտակային հատկացումներ՝ մասնակիցների ռեեստր վարողի հաշվին փոխանցումների բնականոն ընթացքի ապահովումը, ֆիզիկական անձանց կողմից իրականացված՝ ապրանքների մատակարարում համարվող գործարքների մասով ԱԱՀ-ի գումարների վճարման ապահովումը և այլն:

Նախագծերով կարգավորվող շրջանակներն ուղղակիորեն առնչվում են մի շարք ապրանքային շուկաների հետ: Նախագծերի ընդունման արդյունքում էականորեն կնվազեն տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվող ծախսերը, ինչը կարող է նպաստել գործունեությունը դադարեցրած տնտեսվարող սուբյեկտների գործունեության վերսկսմանը, իսկ գործողների դեպքում՝ ֆինանսական վիճակի բարելավմանը: Նախագծերի ընդունումը կարող է հանգեցնել տվյալ ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների (մատակարարների) քանակի ավելացմանը:

Հիմք ընդունելով նախնական և ազդեցության գնահատման բուն գործընթացի փուլերի արդյունքները՝ արձանագրվում է Նախագծերի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա *դրական ազդեցություն հայտնաբերելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶԻԶՅԱՆ